ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» նոյեմբերի 2024թ. № 1123

ՀԱՍՄԻԿ ՎԱՆԻՉԿԱՅԻ ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 116-Ա որոշումը, 2024 թվականի նոյեմբերի 18-ի «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով վաճառելու մասին» թիվ 10/1-2 արձանագրությունը, հաշվի առնելով, որ 06-006-0191-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողամասերի ցանկի մեջ՝ ***որոշում եմ.***

1. «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Շվեյցարական թաղամաս 162 հողամաս» հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-006-0191-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 488 400 (չորս հարյուր ութսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամով, առևտրի սրահ կառուցելու նպատակով, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Հասմիկ Վանիչկայի Աղաբեկյանին (ծնված՝ 26.12.1965թ.):

2. Հասմիկ Վանիչկայի Աղաբեկյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում, աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ.նոյեմբերի 19
ք.Սպիտակ